ՍԱՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 50 ՏԱՐԻՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

Այս տարվա դեկտեմբերին լրանում է մեր բազմազգ պետության՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 50 տարին։ Դա պատմական խոշորագույն նշանակություն ունեցող երեվույթ է, յուրահատուկ տոն Սովետական երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների համար։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով մեր երկրում արմատապես լուծվեց ազգային հարցը, ժողովուրդների բարեկամության և եղբայրական համագործակցության համար լայն հնարավորություններ բացվեցին։ Եթե մինչ այդ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ինտերնացիոնալ կապեր հաստատելով միմյանց միջև, նրանք պայքարում էին շահագործողների տիրապետության դեմ, ապա այժմ, պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում հրամայական անհրաժեշտություն էր առաջացել իրավահավասարության հիմունքներով պետական ամուր դաշինք հաստատել ազգային սովետական հանրապետությունների միջև։ Դրա առաջին փայլուն օրինակը հանդիսացավ Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը, որը կազմակերպվեց 1918 թ. հունվարին։

1918—1921 թթ. քաղաքացիական կռիվների տարիներին սովետական հանրապետությունների՝ ՌՍՖՍՀ, Ուկրաինայի, Բելոռուսիայի, քիչ ավելի ուշ՝ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի միջև ռազմական և դիվանագիտական դաշինք է հաստատվում ընդդեմ ներքին և արտաքին թշնամիների։ Այդ դաշինքը կարևոր առաջընթաց քայլ հանդիսացավ նրանց պետական միավորման՝ ՍՍՀՄ կազմակերպման ճանապարհին և վճռական նշանակություն ունեցավ քաղաքացիական կռիվներում սովետական ժողովրդի հաղթանակի գործում։

Սովետական Միության կազմակերպմանը նախորդեց նաև Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծումը, որի 50 տարին լրացավ 1972 թ. մարտի 12-ին։ Այդ ֆեդերացիան երկրամասի երեք հանրապետությունների՝ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի պետական դաշինքն էր, որը ստեղծվեց ՌՍՖՍՀ օրինակով։

Առաջնորդվելով կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության սկզբունքներով, Անդրկովկասի սովետական հանրապետությունները իրենց գոյության հենց սկզբից առաջին լուրջ քայլերն են անում միմյանց հետ դաշինք հաստատելու բնագավառում։

Ազգամիջյան խաղաղությունը, եղբայրական դաշինքը և սերտ համագործակցությունը մեր երկրի, այդ թվում Կովկասի ժողովուրդների միջև Վ. Ի. Լենինը համարում էր կարևորագույն նախադրյալ Սովետական իշխանության

ամրապնդման և սոցիալիզմի կառուցման համար։ Դա, իհարկե, դժվարին խնդիր էր, որի իրականացման համար անհրաժեշտ էր հաղթահարել ազգային թշնամանքը, բուրժուական ազգայնականների և կուսակցության մյուս թշնամիների կատաղի գիմադրությունը և հասնել փոխադարձ վստահության երկրամասի ազգությունների միջև։

Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստների առջև խնդիր դրեց լուրջ կերպով հաշվի առնել Անդրկովկասի յուրահատկությունները և Սովետական Ռուսաստանի հարուստ փորձի հիման վրա կենսագործել Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի պետական-քաղաքական միավորումը։ 1921 թ. ապրիլին Վ. Ի. Լենինը գրել է. «Ջերմագին ողջունելով Կովկասի սովետական հանրապետությունները, ես ինձ թույլ եմ տալիս հույս հայտնել, որ նրանց սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[1]։

Երկրամասի կոմունիստական կազմակերպությունները Վ. Ի. Լենինի ցուցումների հիման վրա նախապատրաստական լուրջ աշխատանքներ են ծավալում ֆեդերացիայի ստեղծման համար։ Այդ նույն նպատակով պայքարի ավանգարդում էր Բաքվի պրոլետարիատը, որն անցել էր ինտերնացիոնալ դաստիարակության բազմահարուստ դպրոց։ Դեռևս 1921 թ. ապրիլի 11-ին լսելով Գ. Կ. Օրջոնիկիձեի և Ս. Մ. Կիրովի զեկուցումները Անդրկովկասի սովետական հանրապետությունների պետական միավորման մասին, Բաքվի սովետի նիստը անհրաժեշտ է համարում ստեղծել այդպիսի միավորում։

Ֆեդերացիայի ստեղծման ճանապարհին կարևոր առաջընթաց քայլ հանդիսացավ երեք հանրապետությունների երկաթուղիների միավորումը, որը իրացվեց 1920 թ. ապրիլի 20-ի համաձայնագրով։ Այնտեղ ասված է. «Շահագործման ենթակա բոլոր երկաթուղիները, որ անցնում են Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի սովետական հանրապետությունների սահմաններում, միավորվում են Անդրկովկասյան հանրապետությունների երկաթուղիների մեկ ընդհանուր ցանցի մեջ»[2] և հանձնվում երկաթուղիների Անդրկովկասյան ընդհանուր վարչության տնօրինությանը։

Ֆեդերացիայի ստեղծման ճանապարհին հաջորդ կարևոր քայլը հանդիսացավ եղբայրական երեք հանրապետությունների արտաքին առևտրի միավորումը 1921 թ. հունիսի 25-ին։

Այդ երկու միջոցառումները խոշոր չափով նպաստեցին երեք հանրապետությունների տնտեսական համագործակցությանը։

Գործադրելով բոլոր ուժերը, երկրամասի կոմունիստական կազմակերպությունները Գ. Կ. Օրջոնիկիձեի, Ա. Ֆ. Մյասնիկյանի և Ս. Մ. Կիրովի ղեկավարությամբ հաստատ կերպով առաջ էին տանում ֆեդերացիայի նախապատրաստման աշխատանքները։ Հանգամանորեն քննության առնելով ֆեդերացիայի ստեղծման հարցը, ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումը 1921 թ. նոյեմբերի 3-ին «անհետաձգելի ու անհրաժեշտ է գտնում ֆեդերատիվ դաշինքի կնքումը հանրապետությունների միջև նախ և առաջ ռազմական, տնտեսական ու ֆինանսական աշխատանքի և արտաքին քաղաքականության բնագավառում»[3]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, Երևան, 1952, էջ 402։

[2] «Образование СССР. Сборник документов 1917—1924», М., 1949, стр. 271.

[3] Նույն տեղում, էջ 280։

Կովկասյան բյուրոյի պլենումի այդ որոշումը ներկայացվում է ՌԿ(բ)Կ Կենտկոմի հաստատմանը։ Վ. Ի. Լենինը ծանոթանալով դրան, քաղբյուրոյի համար նոյեմբերի 28-ին պատրաստում է առաջարկի նախագիծ Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպման մասին։ Այնտեղ ասված է. «1) Անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիան համարել սկզբունքորեն բացարձակապես հիշտ և անպայման իրագործման ենթակա, սակայն գործնականապես անհապաղ իրագործելու իմաստով վաղաժամ, այսինքն պահանջում է որոշ ժամանակ՝ քննարկման, պրոպագանդայի և սովետական եղանակով ներքևից անցկացնելու համար։

2) Առաջարկել (Կովկասյան բյուրոյի միջոցով) Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի Կենտրոնական կոմիտեներին ֆեդերացիայի հարցն ավելի լայնորեն դնել կուսակցության և բանվորական ու գյուղացիական մասսաների քննարկմանը, եռանդուն պրոպագանդա մղել ֆեդերացիայի օգտին և այն անցկացնել յուրաքանչյուր հանրապետության սովետների համագումարների միջոցով. մեծ օպոզիցիա լինելու դեպքում ճշտորեն և ժամանակին տեղեկացնել ՌԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյին»[4]։

Նոյեմբերի 29-ին այդ նախագիծը հավանության է արժանանում և հաստատվում է քաղբյուրոյի կողմից։

Այնուհետև երկրամասում ֆեդերացիայի նախապատրաստման աշխատանքները նոր թափ են ստանում, վերածվելով համաժողովրդական շարժման, որի մեջ են ընդգրկվում բոլոր հանրապետությունների աշխատավորական լայն դանգվածները։ Երևանի, Ալեքսանդրապոլի և այլ քաղաքների ու բնակավայրերի խորհուրդների նիստերը և աշխատավորական ժողովները զեկուցումներ լսելով ֆեդերացիայի ստեղծման մասին, միահամուռ հավանություն են տալիս այդ գաղափարին[5]։

Հայաստանի կոմունիստական կուսակցության I համագումարը (1922 թ. հունվար) լսեց Ա. Մյասնիկյանի զեկուցումը սովետական շինարարության և Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպման մասին։ Առաջնորդվելով լենինյան դրույթներով, Ա. Մյասնիկյանը բազմակողմանիորեն հիմնավորում է ֆեդերացիայի կարևորությունը և Հայաստանի՝ նրա մեջ մտնելու անհրաժեշտությունը։ Զեկուցման առթիվ ընդունած բանաձևում հավանություն տալով Ա. Մյասնիկյանի զեկուցման բոլոր դրույթներին, համագումարը հանձնարարում է Հայաստանի կոմունիստական կուսակցության պատգամավորներին Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների առաջիկա համագումարում միահամուռ պաշտպանելու ֆեդերացիայի ստեղծման անհրաժեշտությունը[6]։

Հանրապետության սովետների առաջին համագումարը (1922 թ. հունվարի 30—փետրվարի 4) լսելով Ա. Մռավյանի զեկուցումը, նույնպես հավանություն է տալիս ֆեդերացիայի ստեղծման գաղափարին և հանձնարարում է Կենտրոնական գործադիր կոմիտեին ձեռնարկել բոլոր գործնական միջոցները ֆեդերացիան շուտով իրականացնելու համար[7]։

---

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, Երևան, 1952, էջ 136։

5 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 4/114, գ. 184, թ. 85։

6 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմի Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուս. արխիվ, ՀԿ(բ)Կ առաջին համագումարի սղագրական հաշվետվությունը, էջ 42։

7 Տե՛ս «Հայաստանի ՍՍՀ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը», Պետհրատ, Երևան, 1922, էջ 119—120։

Ֆեդերացիայի նախապատրաստական աշխատանքները ընթանում էին բուրժուա-ազգայնական տարրերի կատաղի դիմադրության պայմաններում, որոնց դեմ երկրամասի կոմունիստական կազմակերպությունները անհաշտ պայքար ծավալեցին։ Բացի մենշևիկյան, մուսավաթական և դաշնակցական թափթփուկներից, որոնք ամեն կերպ հրահրում էին ազգամիջյան ատելություն և փորձում ձախողել ֆեդերացիայի ստեղծումը, կոմունիստական կուսակցության շարքերում ևս գտնվեցին մարդիկ, որոնք դեմ էին ֆեդերացիայի կազմակերպմանը։

Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կոմունիստական կուսակցությունները ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի ղեկավարությամբ ծավալուն պայքար մղեցին նացիոնալ-ուկլոնիստների, մեծապետական շովինիստների, նրանց պաշտպան տրոցկիստների և լենինիզմի մյուս թշնամիների դեմ, հաջողությամբ առաջ տանելով ֆեդերացիայի ստեղծման նախապատրաստական աշխատանքները, որոնք 1922 թ. մարտին արդեն ավարտվել էին։ Նույն ամսի 12-ին Թիֆլիսում գումարվում է Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի Կենտրոնական գործադիր կոմիտեների լիազոր կոնֆերանսը, ուր ընդունվում է պայմանագիր երեք հանրապետությունների քաղաքական, տնտեսական և ռազմական սերտ դաշինքի մասին։ Կազմակերպվում է նրանց պետական միությունը, որն առաջին շրջանում կոչվում էր Անդրկովկասի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Ֆեդերատիվ Միություն (ԱՍՍՀՖՄ)։ Այդ Միության իրավական հիմքը հանդիսանում էր նրա մեջ մտնող հանրապետությունների սուվերեն իրավահավասարությունը և ինքնուրույնությունը։

Պայմանագիրը, որը բաղկացած էր 13 կետից, նախատեսում էր Միության ղեկավար օրգանների կառուցվածքը, նրանց խնդիրները և փոխհարաբերությունները։ Այնտեղ մասնավորապես ասված էր.

«1. Հանրապետությունների Միության բարձրագույն իշխանությունը հանդիսանում է Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կառավարությունների կողմից հավասար թվով ընտրված ներկայացուցիչների լիիրավ կոնֆերանսը։

2. Լիիրավ կոնֆերանսի գործադիր մարմինը Միութենական Սովետն է, որի անդամներն ընտրվում և հետ են կանչվում կոնֆերանսի կողմից։

3. Միութենական Սովետի իրավասության են անցնում՝ ռազմական գործերը, ֆինանսները, արտաքին քաղաքականությունը, արտաքին առևտուրը, հաղորդակցության ճանապարհները, ժողովրդական կապը, պայքարը հակահեղափոխության դեմ և տնտեսական քաղաքականության ղեկավարությունը պայմանավորվող հանրապետությունների տերիտորիայում»[8]։

Պայմանագրի մնացած կետերում շարադրված էին Միութենական սովետի ղեկավար օրգանները, նրանց խնդիրները, իրավունքները և փոխհարաբերությունները[9]։ Վերջին կետով սահմանված էր Միութենական սովետի և ՌՍՖՍՀ փոխհարաբերությունների կարգը։

Այսպիսով, 1922 թ. մարտի 12-ին դրվեցին Անդրկովկասյան ֆեդերացիայի ամուր հիմքերը։ Մինչև նույն թվականի վերջերը (ութ ամսվա ընթացքում) մի շարք կարևոր ձեռնարկումներ կատարվեցին ֆեդերատիվ կապերն ավելի ամրապնդելու և զարգացնելու ուղղությամբ։ Հանրապետությունների արտա-

---

8 «Образование СССР...», стр. 288.

9 Նույն տեղում, էջ 288—289։

ին գործերի ժողովրդական կոմիսարիատների փոխարեն Միութենական սովետին կից կազմակերպվեց արտաքին հարաբերությունների բաժին, որը Անդրկովկասյան ֆեդերացիան ներկայացնում էր արտաքին հարաբերություններում։ Վերացվեցին մաքսատները Անդրկովկասի երեք հանրապետությունների միջև։ Միավորվեց երկրամասի փոստի և հեռագրի գործը։ Կարևոր ձեռնարկումներ սկսվեցին ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ։ Ներքին հակահեղափոխական ուժերի դեմ պայքարելու նպատակով ստեղծվեց Անդրկովկասյան արտակարգ հանձնաժողով։ Գործնական միջոցառումներ մշակվեցին Անդրկովկասյան միասնական դրամ ստեղծելու և երեք հանրապետությունների միջև եղած ֆինանսական կապերը ամրապնդելու համար։

1922 թ. դեկտեմբերի 10—13-ը Բաքվում տեղի է ունենում սովետների Անդրկովկասյան առաջին համագումարը։ Ս. Մ. Կիրովը զեկուցում է ֆեդերացիայի ներքին և արտաքին դրության մասին, իսկ Գ. Կ. Օրջոնիկիձեն՝ ՍՍՀՄ կազմակերպման մասին։ Համագումարը քննության է առնում նաև Միութենական սովետի ութամսյա գործունեության հաշվետվությունը և հավանություն տալիս։ Համագումարը որոշում է Անդրկովկասի Հանրապետությունների Ֆեդերատիվ Միությունը վերակազմել միասնական՝ Անդրկովկասյան Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության, որով ավարտվում է ֆեդերացիայի կազմակերպական ձևավորումը։

Համագումարը ընտրեց Անդրկովկասյան ֆեդերացիայի գերագույն օրգանը՝ Անդրկովկասյան կենտգործկոմը։ Համագումարից հետո կազմվեց ֆեդերացիայի կառավարությունը՝ ժողովրդական կոմիսարների սովետը։

Համագումարը հաստատեց ֆեդերացիայի սահմանադրության նախագիծը, որի համաձայն, այն խնդիրները, որոնք հավասար չափով շոշափում էին Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի շահերը, հանձնվեցին Անդրկովկասյան ֆեդերացիայի կառավարության իրավասությանը։ Իսկ մնացած բոլոր խնդիրները՝ ներքին գործերը, արդարադատությունը, ժողովրդական լուսավորությունը, կուլտուրական շինարարությունը, առողջապահությունը, սոցիալական ապահովությունը և այլն մնացին առանձին հանրապետությունների տնօրինությանը։

Ֆեդերացիան հենված էր նրա մեջ մտնող հանրապետությունների կամավոր համաձայնության, փոխադարձ վստահության, իրավահավասարության և ինքնուրույնության վրա։ Այն ամեն կերպ խթանում, պաշտպանում էր երկրամասի ժողովուրդների շահերն ու զարգացումը, դա սերտորեն շաղկապելով սոցիալիստական շինարարության հետ, բոլոր ժողովուրդների դասակարգային-ինտերնացիոնալ պայքարի խնդիրների հետ։

Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծումը հանդիսացավ կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կարևոր հաղթանակը։ Միավորվելով ֆեդերացիայի մեջ, Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի սովետական հանրապետությունները, կոմունիստական կուսակցության Անդրկովկասյան երկրային կոմիտեի ղեկավարությամբ հաստատ կերպով առաջ էին տանում սոցիալիստական շինարարության գործը, հանդիսանալով մեր երկրի ամուր պատվանդանը նրա հարավ-արևելյան սահմաններում։

Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպման նախապատրաստական աշխատանքները սերտորեն շաղկապված էին Սովետական Միության ստեղծման նախապատրաստական աշխատանքների հետ։ Այդ ժամանակ ամբողջ

սովետական երկրում համաժողովրդական շարժում էր ծավալվել բոլոր սովետական հանրապետությունների պետական միավորման համար, որի գաղափարական նախաձեռնողը և կազմակերպիչը հանդիսացավ Վ. Ի. Լենինը։

Պրոլետարիատի մեծ առաջնորդը ուսուցանում էր, որ առանց սովետական հանրապետությունների պետական միավորման, առանց նրանց եղբայրական սերտ դաշինքի և համագործակցության անհնարին է սովետական իշխանության գոյությունը և սոցիալիզմի կառուցումը։ Դեռևս 1920 թ. հունիսին, երբ արդեն կանխորոշված էր սովետական երկրի հաղթանակը քաղաքացիական կռիվներում, ինտերվենտների դեմ մղվող պայքարում և օրակարգի հարց էր դառնում տնտեսական խաղաղ շինարարությունը, Վ. Ի. Լենինը գտնում էր, որ «... անհրաժեշտ է ձգտել ավելի ու ավելի սերտ ֆեդերատիվ միության, նկատի ունենալով, առաջին՝ ամբողջ աշխարհի ռազմական տեսակետից անհամեմատ ավելի զորեղ իմպերիալիստական պետություններով շրջապատված սովետական հանրապետությունների գոյությունը պաշտպանելու անհնարինությունն առանց սովետական հանրապետությունների ամենասերտ դաշինքի. երկրորդ՝ սովետական հանրապետությունների տնտեսական սերտ դաշինքի անհրաժեշտությունը, առանց որի անիրագործելի է իմպերիալիզմի կողմից ավերված արտադրողական ուժերի վերականգնումը և աշխատավորների բարեկեցության ապահովումը. երրորդ՝ միասնական, մի ընդհանուր պլանով, բոլոր ազգերի պրոլետարիատի կողմից կարգավորվող համաշխարհային տնտեսության՝ որպես ամբողջության ստեղծման տենդենցը, որը միանգամայն ակնհայտորեն դրսևորվել է արդեն կապիտալիզմի օրով և անպայման ենթակա է հետագա զարգացման և լիակատար ավարտման սոցիալիզմի օրով»[10]։

Այսպիսով, նշելով սովետական պետության զարգացման հեռանկարները, ուղիներն ու ձևերը, Վ. Ի. Լենինը հիմնավորել է Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծման անհրաժեշտությունը որպես բազմազգ սոցիալիստական պետության զարգացման նոր, ավելի բարձր աստիճան։

Լենինյան այդ գաղափարների կենսագործման համար Սովետական երկրում սկսված համաժողովրդական շարժումը 1922 թ. լայն ծավալ էր ընդունել։ Բոլոր սովետական հանրապետություններում աշխատավորական ժողովները որոշումներ էին ընդունում սովետական հանրապետությունների պետական միավորման՝ ՍՍՀՄ ստեղծման մասին, խնդրելով կուսակցական և սովետական վերադաս օրգաններին իրագործել այն։ Անդրկովկասում այդպիսի որոշումներ են ընդունում Բաքվի, Թիֆլիսի, Երևանի, Սուխումի, Նախիջևանի, Ղարաքիլիսայի և այլ քաղաքների ու գյուղերի աշխատավորական ժողովները[11]։

Սովետների Անդրկովկասյան I համագումարում Գ. Կ. Օրջոնիկիձեն զեկուցելով ՍՍՀՄ կազմակերպման հարցի մասին և ամփոփելով ՍՍՀՄ կազմակերպման համար երկրամասում ծավալված համաժողովրդական շարժման արդյունքները, ասաց. «Վերջերս բոլոր հանրապետություններում ավարտված գավառական համագումարները միահամուռ կերպով կողմ արտահայտվեցին Սովետական հանրապետությունների մի այնպիսի միություն ստեղծելուն, որը լիովին ապահովելով սովետական հանրապետությունների ժողովուրդների կուլտուրական զարգացումը, ապահովելով նրանց լեզուն, գրականությունը և այլն,

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, Երևան, 1952, էջ 168։

11 См. «Образование СССР...», стр. 105—109.

և միևնույն ժամանակ առանձին անկախ հանրապետությունները միավորելով մի ընդհանուր միութենական պետության մեջ, ամրապնդեր բոլոր սովետական հանրապետությունների հզորությունը։ Մենք կողմնակից ենք այդպիսի միությունն ստեղծելուն։ Այդպիսի միությունը մեր սովետական ընտանիքը դարձնում է անպարտելի մի ուժ»[12]։

Միահամուռ հավանություն տալով Գ. Կ. Օրջոնիկիձեի զեկուցմանը, համագումարը որոշում է ընդունում Անդրկովկասյան ֆեդերացիան իրավահավասարության հիմունքներով ՍՍՀՄ-ի մեջ մտնելու մասին և ընտրում սովետների միութենական I համագումարի պատգամավորներ։ Մոսկվայում կայացած այդ համագումարում (1922 թ. դեկտեմբերի 30) կազմակերպվում է Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը։

Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմում շարունակելով խաղաղ սոցիալիստական շինարարությունը, ամրապնդելով եղբայրական կապերը և համագործակցությունը միմյանց միջև և մյուս սովետական հանրապետությունների հետ, Ադրբեջանը, Հայաստանը և Վրաստանը գնալով, ավելի ու ավելի մեծ հաջողությունների էին հասնում։ Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում նրանք հաջողությամբ ավարտեցին ժողովրդական տնտեսության վերականգնումը, որի արդյունքները ամփոփեց Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների IV համագումարը (1925 թ. դեկտեմբերի 5—9)։ Անդրկովկասյան երկրային կոմիտեի քաղաքական հաշվետվության մեջ Գ. Կ. Օրջոնիկիձեն նշեց, որ ժողովրդական տնտեսության և կուլտուրայի բոլոր բնագավառներում երկրամասում խոշոր հաջողություններ են ձեռք բերվել։ Վերականգնվել են արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և տրանսպորտը։ Երկրամասի ժողովուրդների միջև հաստատվել է անխախտ բարեկամություն և փոխադարձ վստահություն։ Այդ բոլորը լենինյան ազգային քաղաքականության կենսագործման արդյունք էին։ Զեկուցման մեջ ասված է. «Ամենից առաջ մենք ունենք ազգային խաղաղություն— այդ առաջին և հիմնական նախադրյալն է մեր ժողովրդական տնտեսության և մեր կուլտուրայի զարգացման համար»[13]։

Համագումարը լսեց Ս. Լուկաշինի զեկուցումը արդյունաբերության զարգացման հետագա խնդիրների մասին։ Այդ առթիվ ընդունված որոշման մեջ նշվեց, որ երկրամասի տնտեսության հետագա վերելքը հնարավոր չէ առանց ինդուստրիայի զարգացման։ Հաջորդ տարիներին խոշոր շինարարություն կատարվեց ինդուստրացման գծով։ Արդյունաբերական նորանոր ձեռնարկություններ կառուցվեցին ֆեդերացիայի մեջ մտնող բոլոր հանրապետություններում։ Առաջին քայլերը կատարվեցին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ճանապարհին։

Երկրամասում սոցիալիստական շինարարությունը նոր, ավելի մեծ ծավալ ընդունեց առաջին հնգամյակի տարիներին, երբ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը ապրեցին բուռն վերելք։ Հանրապետությունների համատեղ միջոցներով և ջանքերով կառուցվեցին և շահագործման հանձնվեցին Ռիոնգէսը, Զորագէսը, Զագէսը, Խրամգէսը, Քանաքեռգէսը և այլն։ Հնգամյակի վերջում էլեկտրաէներգիայի արտադրությունը հասավ 227,67 հազար կիլո-

12 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 112։

13 «Четвертый съезд коммунистических организаций Закавказья. Стенографический отчет», Тифлис, 1926, стр. 7.

վատի, 1928 թ. 118,9 կիլովատի դիմաց։ Էներգետիկ հզոր բազայի ստեղծումը նպաստեց արդյունաբերության բոլոր ճյուղերի, մասնավորապես ծանր արդյունաբերության, նավթի և գունավոր մետալուրգիայի արդյունահանման ճյուղերի զարգացմանը։ Հնգամյակի տարիներին երկրամասի արդյունաբերության մեջ ներդրվեց 2 միլիարդ 135 միլիոն ռուբլի, իսկ գյուղատնտեսության մեջ՝ ավելի քան 454 միլիոն ռուբլի[14]։ Ստեղծվեցին արդյունաբերության բազմաթիվ նոր ճյուղեր՝ զինված հայրենական ժամանակակից տեխնիկայով։ Խոշոր աշխատանք կատարվեց երկաթուղային տրանսպորտի ընդարձակման և աշխատանքների բարելավման համար։

Ֆեդերացիայի մեջ մտնող բոլոր հանրապետություններում աճեցին ազգային արտադրական-տեխնիկական կադրերը, որոնք նպաստեցին ժողովրդական տնտեսության զարգացմանը։ Մեծ չափով աճեց ազգային բանվոր դասակարգը։ Ավելի բարձրացավ նրա առաջատար դերը սոցիալիստական հասարակարգի կառուցման համար մղվող պայքարում։

Արդյունաբերության զարգացումը լայն հնարավորություններ ստեղծեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար։ Իրագործվեց գյուղատնտեսության կոլեկտիվացումը։ Գյուղը հաստատապես կանգնեց սոցիալիստական զարգացման ուղու վրա։

Հատկանշական է, որ առաջին հնգամյա պլանը ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ Անդրկովկասում իրագործվեց 4 տարում։

Սովետական Միության մեջ մտնող բոլոր հանրապետությունների սոցիալիստական զարգացման ճանապարհին առաջընթաց խոշոր քայլ հանդիսացավ ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանը (1933—1937 թթ.), որը նույնպես կատարվեց ժամկետից շուտ։

Երկրորդ հնգամյակի տարիներին Անդրկովկասյան Ֆեդերացիայի ժողովրդական տնտեսության մեջ ներդրվեց 4 միլիարդ 750 միլիոն ռուբլի։ Արդյունաբերության արտադրանքը աճեց ավելի քան երկու անգամ 1932 թ. 1 միլիարդ 778 միլիոն ռուբլուց 1937 թ. հասնելով 3 միլիարդ 670 միլիոն ռուբլու[15]։

Կարևոր հաջողություններ էին ձեռք բերվել գյուղատնտեսության, աշխատավորների նյութական կենսամակարդակի, կուլտուրական շինարարության և մյուս բնագավառներում։

Սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ էական փոփոխություններ կրեց ամբողջ երկրի, այդ թվում Անդրկովկասի բնակչության դասակարգային կազմը։ Հասարակությունը այժմ կազմված էր՝ բանվոր դասակարգից և կոլտնտեսային գյուղացիությունից, մտավորականությունից։

ՍՍՀՄ Սովետների VIII արտակարգ համագումարը 1936 թ. դեկտեմբերի 5-ին ընդունեց ՍՍՀՄ նոր՝ հաղթանակած սոցիալիզմի Սահմանադրությունը, որտեղ արտացոլված են մեր մեծ հայրենիքում կատարված այն հսկայական փոփոխությունները, որ տեղի էին ունեցել 1924 թ. ընդունված սահմանադրությունից հետո։

---

[14] «Итоги выполнения первого пятилетнего плана развития народного хозяйства ЗСФСР», Тифлис, 1934, стр. 4.

[15] «Итоги выполнения второго пятилетного плана развития народного хозяйства Союза ССР», М., 1939, стр. 115.

Անդրֆեդերացիայի գոյության տարիներին Ադրբեջանը, Հայաստանը և Վրաստանը վիթխարի առաջընթաց ապրեցին ոչ միայն ժողովրդական տնտեսության, կուլտուրայի, հասարակական հարաբերությունների, այլև պետական շինարարության բնագավառում։ Որպես ինքնուրույն ազգային հանրապետություններ, նրանք մեծ չափով ամրապնդվել էին, ավելի ու ավելի ընդարձակելով իրենց եղբայրական կապերն ու համագործակցությունը սովետական մյուս հանրապետությունների հետ։ Այժմ առկա էին բոլոր պայմանները, որպեսզի նրանք մտնեին ՍՍՀՄ կազմի մեջ՝ որպես նրա իրավահավասար անդամներ։ Ուրեմն Անդրկովկասյան Ֆեդերացիան կատարել էր իր պատմական դերը։ Անդրկովկասյան Ֆեդերացիան իր գոյության 15 տարիների ընթացքում խոշոր դեր կատարեց սոցիալիստական շինարարության, ժողովուրդների բարեկամության ամրապնդման և ինտերնացիոնալ դաստիարակության գործում։

ՍՍՀՄ նոր Սահմանադրության համապատասխան Վրացական, Հայկական և Ադրբեջանական սովետական հանրապետությունները մտան մեր բազմազգ հզոր պետության՝ ՍՍՀՄ-ի կազմի մեջ՝ որպես նրա իրավահավասար անդամներ։ Դա իր օրենսդրական ձևակերպումն ստացավ նաև Վրաստանի սովետների VIII (1937 թ. փետրվար), Ադրբեջանի սովետների IX (1937 թ. մարտ) և Հայաստանի սովետների IX (1937 թ. մարտ) արտակարգ համագումարներում ընդունված նրանց նոր սահմանադրություններում։

Սկսվեց Անդրկովկասի Սովետական հանրապետությունների պատմության նոր շրջանը։ Սովետական ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքում նրանք հասան հետագա վիթխարի հաջողությունների։

ЗАКАВКАЗСКАЯ ФЕДЕРАЦИЯ

А. М. АКОПЯН

Доктор исторических наук

Резюме

Одним из равноправных членов СССР являлась Закавказская федерация, 50-летие которой исполняется в марте этого года. Создание федерации осуществилось под руководством коммунистических организаций края. В деле организации федерации большую роль сыграли верные соратники В. И. Ленина—Г. К. Орджоникидзе, А. Ф. Мясникян и С. М. Киров. Под их руководством коммунистические организации края вели беспощадную борьбу против буржуазных националистов и прочих врагов ленинизма. В этой борьбе все более укреплялась дружба и братское сотрудничество между народами нашей страны.

Благодаря осуществлению ленинской национальной политики за 15 лет (1922—1936 гг.) существования Закавказской федерации советские Азербайджан, Армения и Грузия достигли крупных успехов в социалистическом строительстве.

Выполнив свою историческую роль, Закавказская федерация в 1936 г. с принятием новой Конституции СССР, была ликвидирована. Армянская, Азербайджанская и Грузинская ССР вошли непосредственно в состав СССР как его равноправные члены.